



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail:
info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

24.08.2022թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
Պարոն Էդվարդ Հովհաննիսյանին
«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80, e-mail: grisha.balasanyan@hetq.am

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տեղեկացնել.

1. Արմավիրի մարզում հարցմանը պատասխանելու օրվա դրությամբ քանի՞ աղբավայր կա, դրանցից քանի՞սն են օրինական գրանցված: *Կցել աղբավայրերի ցանկը՝ ըստ բնակավայրերի և զբաղեցրած տարածքի չափի:*
2. Աղբավայրերից քանի՞սն են ցանկապատված:
3. Զցանկապատված աղբավայրերի մոտակայքում գտնվող հողատարածքի սեփականատերերը չեն կարողանում իրենց հողատարածքները մշակել՝ աղբավայրից հողատարածք ներթափանցած աղբի պատճառով: *Մարզպետարանում երբևէ քննարկվել է յո՞ հարցը և ինչ լուծումներ են առաջարկվել:*
4. Աղբավայրերից քանի՞սն են փակվել 2017-2022թթ. ընթացքում: *Նշել փակված աղբավայրերի անունները (տարածքները):*
5. 2017-2022թթ. ընթացքում մարզի տարածքում ի՞նչ նոր աղբավայրեր են գոյացել, դրանք ո՞ր համայնքների տարածքներում են գտնվում և ինչ տարածք են զբաղեցնում:
6. Մարզպետարանն ի՞նչ քայլեր է ձեռնարկում համայնքներում աղբահանությունը ժամանակին կազմակերպելու և համայնքային, հանրապետական կամ մարզային նշանակության ավտոճանապարհների երկայնքով ձգվող աղբը մաքրելու ուղղությամբ:
7. Դեռևս տարիներ առաջ մարզում քննարկվել է աղբի վերամշակման գործարանի կառուցման հարցը: Ո՞ր փուլում է գտնվում գործարանի կառուցումը:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գ. Բալասանյան